Л.Г. АГАДЖАНЯН, А.М. МУРАДЯН

ВНЕДРЕНИЕ ЛОГИСТИКИ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ РА

Рассматриваются необходимость и целесообразность применения принципов логистики в банковской системе Республики Армения в сфере ипотечного кредитования. Представлены структуры финансовых технологий и формы организации логистики ипотечного кредитования в банковской системе.

Ключевые слова: логистика, управление, финансовые технологии, онлайн-платформа, ипотечное кредитование.

L.H. AGHAJANYAN, A.M. MURADYAN

INTRODUCTION OF LOGISTICS OF MORTGAGE LENDING IN THE BANKING SYSTEM OF REPUBLIC OF ARMENIA

The necessity and expediency of applying the principles of logistics in the banking system of Republic of Armenia in the sphere of mortgage lending are considered. The structures of financial technologies and forms of organization of logistics of mortgage lending in the banking system are presented.

Keywords: logistics, prospects, management, financial technologies, online platform, mortgage lending.

ՀՏԴ 658.8

Ա.Լ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Դիտարկվում են կազմակերպության կայունության էությունը, հիմնական բնութագրերը և դերը տնտեսական զարգացման գործընթացում: Սահմանվել է կայունություն հասկացությունը, և բացահայտվել է նրա սերտ կապն արտաքին միջավայրի հետ: Վերլուծվել են արդյունաբերական կազմակերպության տնտեսական ցուցանիշները, և գնահատվել է նրա գործունեության կայունության մակարդակը:

Առանցքային բառեր. կազմակերպություն, կայունություն, հավասարակշռություն, հայեցակարգ, շահույթ, արտաքին միջավայր:

Կազմակերպության կայունությունը լայն հասկացություն է: Այն կազմակերպության հատկանիշն է, նրա՝ արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում գործելու և զարգանալու կարողությունը՝ պահպանելով իր հավասարակշռությունը: Կազմակերպության կայունությունը դրսևորվում է իր ամբողջա-

կանության պահպանման, ռեսուրսների տնտեսման, փոփոխություններին հարմարվելու և զարգացման հնարավորությունների ստեղծման մեջ [1]:

Կազմակերպության կայունությունը հավասարակշռված վիճակ է, որում այն գտնվում է՝ անկախ արտաքին միջավայրի դրական կամ բացասական փոփոխություններից: Կազմակերպության գործունեության բոլոր ցուցանիշները, նրա կայունության դեպքում, մնում են անփոփոխ երկարատև ժամանակահատվածում: Սակայն դա չի նշանակում, որ կազմակերպությունը գտնվում է լճացման կամ անշարժ վիճակում: Դինամիկ համակարգը, որին դասվում է նաև կազմակերպությունը, ձգտելով կայունության, շարունակում է կատարելագործվել ու զարգանալ:

Սակայն կազմակերպության կայունության հիմնախնդիրը դեռևս տեսական-ճանաչողական ձևավորման փուլում է: Հիմնախնդրի անբավարար ուսումնասիրությունը պատճառ է դառնում կայունության հասկացության և նրա մակարդակի բարձրացման տարակարծիք մեկնաբանությունների [2,3]: Մասնագիտական գրականության մեջ կազմակերպության կայունության վերաբերյալ ուսումնասիրությունները հիմք չեն տալիս դադարեցնելու գիտական որոնումները նրա մակարդակի գնահատման և բարձրացման գործում: Այստեղ անհրաժեշտ են նոր և հստակ տեսական կողմնորոշիչներ:

Տնտեսագիտական աշխատանքներում կազմակերպության կայունության բնութագրման ժամանակ հաճախ առաջնահերթությունը տրվում է ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ լավարկային շահույթի ստացմանը: Այս մոտեցումը համապատասխանում է կազմակերպության գործունեության լավարկման տեսությանը, որի հիմքում ընկած է առավելագույն շահույթի սկզբունքը: Սակայն այս տեսությունը չի կարող բացատրել կազմակերպությունների առաջացման, գոյության և անհետացման պատճառները: Բացի դրանից, տվյալ մեկնաբանմամբ բոլոր կազմակերպությունները, առանց բացառության, դառնում են մրցակիցներ, այսինքն՝ իրավաբանական անձինք, որոնք շահագրգռված են միևնույն նպատակի ձեռքբերմամբ: Այդպիսի պայմաններում հասնել կայուն զարգացման ոչ միայն դժվար է, այլև գործնականում անհնար:

Ինչպես նշել է Գ. Սայմոնը, կազմակերպության նպատակը ոչ թե առավելագույն շահույթի ապահովումն է, այլ շահույթի որոշակի մակարդակի կամ նորմի ձեռքբերումը, շուկայում իր բաժնի պահպանումը [4]: Այլ կերպ ասած, կազմակերպությունը, նվաճելով շահույթի որոշակի մակարդակը, ամրապնդում է այն և ձգտում պահպանել: Դրանով իսկ նա պայմաններ է ստեղծում հետագա կայուն զարգացման համար:

Հայաստանում շուկայական հարաբերությունների զարգացման ներկա պայմաններում կայունության ապահովումը հիմնականում հանգում է կազմակերպության շահույթի ապահովմանը: Սակայն շահույթը չի կարող կազմակերպության գլխավոր նպատակը լինել, շահույթը առավելապես ներքին խնդիր է: Հայաստանում շուկայական հարաբերությունների ձևավորման առաջին տարիները համոզիչ կերպով ցույց տվեցին, թե որքան անկենսունակ են այն կազմակերպությունները, որոնք աշխատում են առավելագույն շահույթի ստացման սկզբունքով: Շուկայական հարաբերությունների հաստատման գործընթացները, մրցակցության ուժեղացումը, գների կայունացումը հանգեցրին այդ կազմակերպությունների վերացմանը կամ սնանկացմանը: Այժմ այդպիսի կազմակերպություններն իրենց գոյությունը կարող են պահպանել միայն շատ կարճ ժամանակում և այն էլ շուկայի նոր հատվածներում:

Կազմակերպության կայունության ապահովումը ենթադրում է նրա սերտ փոխգործակցությունը արտաքին միջավայրի հետ: Միաժամանակ, կազմակերպությունը կարող է մշտապես հարմարվել արտաքին պայմաններին՝ ունենալով հստակ մշակված ռազմավարություն: Ռազմավարության հիմքում ընկած է հիմնարար երկընտրանք. զուգակցել երկու տարաբնույթ սկզբունքներ՝ կայունություն և փոփոխականություն: Մի կողմից՝ առավելագույն կայունությունը ենթադրում է ուժերի համակենտրոնացում, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ է հարմարվել փոփոխվող պայմաններին:

Հենվելով վերը շարադրվածի վրա, կարելի է նշել, որ կազմակերպության տնտեսական կայունության ապահովման հայեցակարգային մոտեցումները մշակելիս անհրաժեշտ է ելնել արտաքին միջավայրի հետ նրա փոխգործակցության, տեղեկատվության ապահովման և ռազմավարական ընտրության կողմնորոշիչներից:

Կայուն հավասարակշռության վիճակը բնութագրվում է նրանով, որ կազմակերպությունն ավելի քիչ է ենթակա բացասական խաթարող գործոնների ազդեցությանը: Եթե այդ ազդեցությունները չեն գերազանցում որոշ շեմային արժեքը, ապա կազմակերպությունը բավականին արագ է հարմարվում արտաքին միջավայրի նոր պայմաններին և կրկին վերադառնում է կայուն վիճակին: Կազմակերպությունը, գտնվելով անկայուն հավասարակշռության վիճակում, նույնիսկ ամենաչնչին տատանողական ազդեցության դեպքում կարող է կորցնել իր կայունությունը:

Կազմակերպության կայունությունը կախված է ներքին և արտաքին միջավայրից, գործունեության բնույթից, ռեսուրսների առկայությունից, կառավարման արդյունավետությունից և այլն: Դրանցից կայունության վրա ամենամեծ ազդե-

ցությունը թողնում է արտաքին միջավայրը: Այն ներառում է այն բոլոր գործոններն ու ինստիտուտները, որոնց հետ կազմակերպությունը բախվում է իր օպերատիվ կամ ռազմավարական գործունեությունն իրականացնելիս: Դրանք են՝ տնտեսական պայմանները, օրենսդրությունը, տեխնոլոգիան, մրցակիցները և այլն: Կազմակերպությունը կախված է արտաքին միջավայրից ինչպես ռեսուրսների գծով, այնպես էլ սպառողների միջոցով, որոնք օգտվում են իր աշխատանքի արդյունքներից: Արտաքին միջավայրը երբեք անփոփոխ չի լինում, այդ պատճառով էլ անհրաժեշտ է կարողանալ արդյունավետ արձագանքել այդ փոփոխություններին:

Ելնելով նշված նկատառումներից՝ կարծում ենք, որ կազմակերպության կայունությունը առաջին հերթին անհրաժեշտ է բացատրել արտաքին միջավայրի ազդեցության նկատմամբ նրա հակազդեցությամբ: Այդ կապակցությամբ մեր կողմից առաջարկվում է կայունության հետևյալ սահմանումը. Կազմակերպության կայունություն ասելով հասկանում ենք շրջակա միջավայրի ազդեցության տակ նրա վիճակի էական ցուցանիշների օպտիմալ մակարդակի պահպանման կարողությունը: Կայունության էության այսպիսի մեկնաբանումը բացահայտում է նրա տնտեսագիտական իմաստը և ցույց է տալիս կայունության և արտաքին միջավայրի սերտ կապը:

Ամերիկյան տնտեսագետները հանձնարարում են կազմակերպության կայունությունը որոշել հետևյալ բանաձևով [5].

$$Z=1,2x_1+1,4x_2+3,3x_3+0,6x_4+1,0x_5 ,$$

որտեղ x_1–ը շրջանառու կապիտալի արդյունավետության ցուցանիշն է, x_2 – ը՝ կուտակված կապիտալի արդյունավետության ցուցանիշը, x_3–ը՝ արտադրության շահութաբերությունը, x_4–ը՝ պարտքի ցուցանիշը, x_5–ը՝ ակտիվների օգտագործման արդյունավետության ցուցանիշը:

Կազմակերպությունը համարվում է կայուն, եթե $Z>3$, իսկ եթե $Z<1,8$, ապա կազմակերպության գործունեությունը ծայրահեղ անկայուն է:

Բերված ցուցանիշն օգտագործելով՝ ամերիկյան տնտեսագետները կարողացել են բացահայտել ընկերությունների 90% - ը սնանկացումից մեկ տարի առաջ, 70% - ը՝ երկու տարի առաջ և 50% - ը՝ սնանկացումից հինգ տարի առաջ:

«Էլեկտրաապարատ» ԲԲԸ կայունության հաշվարկի ելակետային տվյալները 2017թ. համար բերված են աղյուսակում:

«Էլեկտրաապարատ» ԲԲԸ կայունության հաշվարկի ելակետային տվյալները (մլն.դր)

Միջին տարեկան ցուցանիշը	Ցուցանիշի արժեքը
1. Շրջանառու միջոցները (O_{2n})	170
2.Կարճաժամկետ պարտավորությունները ($O_կ$)	62
3. Ընդհանուր ակտիվները (A)	400
4. Կուտակված կապիտալը ($K_կ$)	310
5. Հաշվեկշռային շահույթը ($Ï_h$)	60
6.Ձեռնարկության կապիտալը ($K_ձ$)	310
7. Ձեռնարկության ընդհանուր պարտքը (D)	250
8. Վաճառքի ընդհանուր ծավալը (V)	220

Ելակետային տվյալների հիման վրա հաշվենք ձեռնարկության կայունությունը՝ ըստ վերը նշված բանաձևերի.

$$X_1 = \frac{O_{2n} - O_կ}{A} = \frac{170 - 62}{400} = 0{,}27\,;$$

$$X_2 = \frac{K_կ}{A} = \frac{310}{400} = 0{,}77\,;$$

$$X_3 = \frac{Ï_h}{À} = \frac{60}{400} = 0{,}05\,;$$

$$X_4 = \frac{K_Ó}{D} = \frac{310}{250} = 1{,}24\,;$$

$$X_5 = \frac{V}{A} = \frac{220}{400} = 0{,}55\,:$$

$Z=1{,}2x_1+1{,}4x_2+3{,}3x_3+0{,}6x_4+1{,}0x_5=1{,}2*0{,}27+1{,}4*0{,}77+3{,}3*0{,}05+0{,}6*1{,}24+1{,}0*0{,}55=2{,}85$:

Կարելի է եզրակացնել, որ կազմակերպության գործունեությունը 2017թ. կայուն չի եղել: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կազմակերպության կայունության գործոնների կառուցվածքին և որոշել, թե որ գործոնն է առավել կարևոր ըստ բանաձևի և փաստացի: Ըստ բանաձևի կարևորագույն գործոնը x_3 – ն է, որն ունի գործակցի ամենամեծ արժեքը (3,3): Կայունության փաստացի կառուցվածքում կարևորագույն գործոնը x_4 – ն է (1,24):

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ շուկայական պայմաններում կազմակերպության բնականոն գործունեությունը շատ բանով կանխորոշվում է իր տնտեսական կայունությամբ ինչպես արտադրության, այնպես էլ սպառման ոլորտում: Կայունության գնահատումը, ըստ էության, դառնում է կազմակերպության զարգացման ուղղությունների ընտրման կարևորագույն որակական կողմնորոշիչը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Корпиенко В.И**. Основы менеджмента устойчивого развития. - М.: Ступени, 2002.-124 с.
2. **Туровец О.Г., Родионова В.Н.** Теория организации. -М.: ИНФРА-М, 2003.- 77с.
3. **Чистилин Д.К**. Самоорганизация мировой экономики.-М.:Экономика, 2004.- 301с.
4. **Кондратьев Н.** Большие циклы конъюнктуры. - М.: Экономика, 1993.- 211с.
5. **Давидов В.А.** Устойчивость организации // Экономика и жизнь.- М., 1995.- N2.

А.Л. АГАДЖАНЯН

КОНЦЕПЦИЯ УСТОЙЧИВОСТИ ОРГАНИЗАЦИИ

Рассматриваются сущность, основные характеристики и роль устойчивости организации в процессе экономического развития. Определено понятие устойчивости и раскрыта его тесная связь с внешней средой. Проведен анализ экономических показателей промышленной организации и дана оценка уровня устойчивости ее деятельности.

Ключевые слова: организация, устойчивость, равновесие, концепция, прибыль, внешняя среда.

A.L. AGHAJANYAN

THE CONCEPT OF THE ORGANIZATION STABILITY

The essence of the organization stability, the main characteristics and the role of the organization stability in the economic development process are observed. The concept of stability has been established and its close connection with the external environment has been revealed. The economic indicators of industrial organization are analyzed and the level of its operation stability has been evaluated.

Keywords: organization, stability, balance, concept, profit, external environment.